

Վերջացնելով յօդուածռ՝ պէտք է լիշեմ, որ VII գլուխը ամբողջապէս մի մխիթարական օազիս է կազմում այդ զրականական անապատի մէջ և յոյս է տալիս, որ ապագայում գուցէ զրելու ձիրք զարդանայ պ. Եսայեանի մէջ, եթէ նա առաջընթափառուի գրքեր տպելու մնավառութիւնից և լուրջ կերպով պատրաստուի գեղարուեստագէտի լուրջ կոչման համար:

Տ. Յ.

Bernard Stern: „JUNGTÜRKEN UND VERSCHWÖRER. Dis innere hage der Türkei unter Abdul Hamid II», 263 s.
Բերնարդ Շերն. «ԵՐԻՑԱՍՍԱՐԴ ԹԻՒՐՔԵՐԸ ԵՒ ԳԱԽԱԴԻՐՆԵՐԸ. ԹԻՒՐՔԻԱՅԻ ՆԵՐԸ ՔԻՆ ՊՐՈՊԻԼԻՆԸ ԱՐԴԱՎ ՀԱՄԻԴ Ա-Ի ԽՂԱՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ»:

Մահմեդական տարրը ևս դժգոհ է Թիւրքիայի ներկայ վիճակից. բայց այդ դժգոհութիւնը հայրենասիրութեան հետ է շաղախուած: Այդ դժգոհ հայրենասէրները յայտնի են «Երիտասարդ թիւրքեր» անունով:

Դրանց աշքում հայրենի երկիրն իր պետական կազմակերպութեամբ ներկայացնում էր մի անկազմ ու անկերպարան երկիր, հարստանարութեան ասպարէզ, պաշտօնական ու ոչ պաշտօնական յափշտակութիւնների ենթակայ: Ի՞նչ էին անում դրա հանդէպ երկրի կառավարիչները, իշխանաւորները, որոնք այդ նոր հոսանքին հակառակ սկսեցին իրանց անուանել «Ճերունի թիւրքեր»: Նրանք ոչ մահմեդական թիւրքահպատակներին դարձրել էին «ուայեա», Նրանց բալրովին կղզիացրել էին և այդպիսով առաջ բերել իրար կողք-կողքի ապլոդ, բայց թըշնամի ու խորթ տարրեր՝ մահմեդականներ ու «ուայեաներ»: Այս վերջիններս զուրկ էին քաղաքացիական շատ ու շատ իրաւունքներից, թէն կրում էին տնտեսական ամենածանր բեռք: Պետական այդ գործիչների նպատակն էր մուսէմների ձեռքով ճընշելով ուայեաններին՝ միշտ հպատակութեան մէջ պահել նրանց:

Իսկ «Երիտասարդ թիւրքեր» հիմնովին սխալ ու վեասակար էին համարում այդ ուղղութիւնը և դրա փոխարէն առաջարկում իրանց ծրագիրը, որի հիմքը հետևեալն է. — Օսմաննեան պետութիւնը բարեկարգել և վերակազմել այն ձևով, այնպիսի հիմունքներով, որ նրա բազմացեղ, բազմակրօն, տարբեր տար-

րերը ժամանակի ընթացքում ձուլուեն, միանան և առաջացը-
նեն մի զանգուած, ամբողջական մի մարմին: Ասրթ ու թշնա-
մի ժողովուրդների միջի խարութիւնը վերացնել, փոխադարձ
առկալութիւնը չնշել, նրանց ինքնուրդոյնութեան նպաստող ար-
տօնութիւններն ու սովորոյթները արմատախիլ անել և այդպի-
սով ստեղծել մի ամբողջութիւն՝ միենոյն ձգտումներով, հիմ-
նարկութիւններով ու իդէալով: Այլօս լինելու չեն հալ, թիւրք,
յոյն, բուլգար, սերբ, դրուզ, քիւրդ և այլ ազգեր, այլ այդ բուլգրի
փոխարէն լինելու են «օտառմաններ»՝ ընդհանուր հայրենիքի—
Թիւրքիայի բարօրութեան ու բարգաւաճման համար աշխատող
հպատակներ: Եթէ աւելի կարծ ասելու լինենք, պէտք է երի-
տասարդ թիւրքերի հիմնական սկզբունքը ձեակերպենք այսպէս:
«մի ազգ, մի լեզու, մի կրօն և մի հայրենիք—Թիւրքիա»:

Այդ սկզբունքի վրայ է հիմնուած տիրահռչակ «Օսմաննեան
սահմանադրութիւնը», որ հաստատուեց Արդուլ Համբդի ձեռ-
քով և նրա ձեռքով էլ մեռած տառ մնաց:

Այդ է «Երիտասարդ թիւրքերի» փայտայած հեռանկարը,
այդ է նրանց տենչացած հեռաւոր ապագան, որքան էլ որ ա-
զատամիտ ու լուսաւոր գաղափարներով համեմուած, բօղար-
կուած լինի այդ հիմնական տենչանքը:

Սյդպիսի ծրագիր կազմելու համար նրանք աչքի առաջ
ունէին ուրիշ ազգերի ու պետութիւնների օրինակը: Նրանք ա-
մենց շատ ֆրանսիայի հետ էին շփում, ուստի և ամենից շատ
նրա անցեալի ու ներկայի փորձերից էին օգտուել աշխատում:
Շատ ժամանակ չէ, մտածում էին նրանք, որ ֆրանսիան էլ
բաժանուած էր տարբեր միութիւնների, տարբեր ցեղերի, որոն-
ցից իւրաքանչյւրն ունէր իր ինքնուրոյն կենցաղը, անցեալը,
իր տարբեր լեզուն, սովորոյթներն ու ձգտումները. հիւսիսային
Ֆրանսիայի ընակիչը խորթ էր հարաւայինի համար և արևել-
քինը—արևմուտքի համար ևայն: Բայց չորսիւ կենտրոնական
Ile de France-ի ձեռք առած խելացի միջոցների, հաստատած
նպատակայարմար օրէնքների ու հիմնարկութիւնների՝ այդ բո-
լորը չքացաւ ժամանակի ընթացքում տեղի տալով մի ընդհա-
նուր հոսանքի, որը և ստեղծեց ժամանակակից ֆրանսիան, մի
ազգային գաղափարով, մի ընդհանուր հայրենասիրական զգաց-
մունքով տոգորուած ֆրանսիան:

Եթէ այդպիսի տրանսֆորմացիան հնարաւոր էր ֆրան-
սիայում, ինչու նոյնը չէր կարելի իրավորձել և Թիւրքիա-
յում, որը պակաս չէր առաջնից թէ սահմանների ընդարձա-
կութեամբ և թէ փառապանծ անցեալով: Այդպէս էին դատում

երիտասարդ թիւրքերը, և այդ մաքերը քաջալերում էին նըրացնց:

Սակայն այդ բոլորն իրագործելու համար հարկաւոր էր կերպարանափոխել տիրող կարգերը, որի ջերմ պաշտպանն ու հովանաւորն էր սուլթանական կառավարութիւնն իր ամբողջ բնիւմով, իր վարչական կեղերի սիստեմով՝ Պարզ է ուրիշն, որ ամենից առաջ հէնց այդ կառավարութիւնը պէտք է խիստ հալածանք սկսէր ազատամիտ թիւրքերի դէմ:

Այդպէս էլ եղաւ: Կարճ ժամանակամիջոցում երիտասարդ թիւրքերի միջից դուրս եկան տաղանգաւոր պետական գործիչներ (Ռէշիդ, Ֆուադ, Ալի, Զէմալ և Միդհատ փաշաները) բարենորագչական ջանքերով, սակայն այդ բոլոր ջանքերն ազարդիւն մնացին, և այդ գործիշները միմեանց յետեից զոհ գնացին սուլթանական հալածանքներին:

Եւ այդ հալածանքները տարիների ընթացքում աւելի ու աւելի զարգացան և վերջերս հասան իրանց գագաթնակէտին՝ հայրենիքից տարագիր դարձնելով հարիւրաւոր «երիտասարդ թիւրքերի»: Բայց չը նայելով ձեռք առած բացառիկ խստութիւններին, շարժումը օրէցօր ուժեղանում է և աւելի ու աւելի է սպառնական կերպարանք ստանում: Նրա հոսանքը դրաւել է ոչ միայն հասարակ արհեստաւորների, այլև թիւրք քաղաքացիաների, ժուրնալիստների, զինուորականների, հոգեորականների, ուսանողների, բժիշկների, փաստաբանների և այլն: Այդպիսի մասսայական շարժման դէմ սուլթան Համիդը գործադրում է իր սովորական զէնքը՝ թիւրքէները, մերթ սպառնալիք կարգալով, մերթ համոզել աշխատելով: Օրինակ, անցեալ տարի յուլիսին նա մի շրջաբերական իրադէով ի միջի այլոց զրում է: «Մի քանի մարդիկ, որոնք պետութիւննը և երկրին չարիք են կամենում, իրանց անուանում են «երիտասարդ թիւրքեր», որպէսզի անմիտաբանութիւն ու երկապահութիւն սերմանեն և մի ֆրակցիա կամ կուսակցութիւն ստեղծեն: Այդ պատճառով կայսերական իրադէով բոլոր պաշտօնեաններին և պետութեան հպատակներին արգելում է «երիտասարդ թիւրք» բառը արտասանել և տարածել...

Բայց այդպիսի «արգելքները» մնում են միայն գատարկ բառեր, իսկ շարժումը հեազնեաէ զօրեղանում է՝ Դամոկլեան սրի նման կախուած մնալով Արդուլ-Համիդի զիսին: Երբ բողոք ու դժգոհութիւն են արտալայտում «գեաւուր» հայերն ու մակերդնացիները, այն ժամանակ Համիդը կարող է այդ բողոքը արեան գետերի, գիակների կոյտերի տակ խնդդել և դիպլոմատ Եւրոպային ասել, թէ յեղափոխականներն են մեղաւոր: Իսկ

լնչ ասել, երբ նոյնանման դժգոհութիւն արտայայտում են իսլամի հարազատ զաւակները: Այս դէպքում մասսայական կոտորածների մասին մտածելն անզամ աւելորդ է. մնում են անհատական հալածանքներն ու բանտարկութիւնները: Եւ սուլթանական կառավարութիւնը եռանդով գործադրում է այդ միջոցը:

Գրքիս հեղինակը—Շտերն՝ երկար տարիներ իրեն „Berliner Tageblatt“-ի և «Neue-Freie Presse»-ի թղթակից՝ ապրել է Պոլսում, ականատես է եղել կատարուած դէպքերին, շփուել է պետական գործիչների ու երիտասարդ թիւրքերի հետ և ապա այդ բոլորից յետոյ հեղինակել է իր հետաքրքրացարժ աշխատութիւնը, որ բաւական ամփոփ կերպով պատկերացնում է երիտասարդ թիւրքերի ծագումը, զարգացումը և ներկայ կացութիւնը:

«Գրքիս առաջին հրատարակութիւնը, ասում է նա, լոյս տեսնելուց առաջ արգելուեց ելդրզ-Քէոսկի կողմից: Այդ պատճառով ես առիթից զրգուած եմ նոր հրատարակութեան նախարանում յայտնել, որ ես ոչ թէ թշնամի եմ Արդուլ-Համիդի անձնաւորութեան, այլ նրա յարգողն եմ... Երիտասարդ թիւրքերի գործունէութիւնն ուղղուած է ոչ թէ սուլթանի անձնաւորութեան դէմ, որ իրեն խալֆ՝ սուրբ ու անձեռնմխելի է, այլ նրա խորհրդատունների դէմ, որոնք դէպի կորուստ են մըզում պետութիւնը: Դա մի շարժում է, որի նպատակն է ոչ թէ սուլթանին գահընկեց անելը, այլ շրջապատողների բռնապետութիւնն ու սահմարձակութիւնը ոչնչացնել, սուլթանին նրանց ճանկերից ազատել և այդպիսով ազգը, պետութիւնը և սուլթանին փրկել»...

Փոքրիկ առաջարանից յետոյ պ. Շտերն անցնում է բուն ինդրին և առաջ է քաշում Թիւրքիայի ներքին կեանքը Սուլթան-Մահմուդի, Արդուլ-Մէջիդի, Արդուլ-Ազիզի և Վիրջապէս Արդուլ-Համիդի օրերում, աշխատելով պաշտպանել այն միտքը, թէ իսլամական կրօնը հակառակ չէ բարենորոգումներին, թէ Թիւրքիան կարող է վերածնուել, միայն հարկաւոր է ժամանակ տալ և ամենից առաջ կենտրոնական բարձր իշխանութիւնը բարեփոխել...

Ժամանակ տալ... բայց պ. Շտերն մոռանում է, որ հէնց այդ ժամանակ տալն է չարիքն իր գագաթնակէաին հասցրել և ներկայ դրութիւնն առաջացրել, որ դա է թիւրքանպատակների յոյսը կտրել և սեփական ոյժերով գործելու ճանապարհի վրայ կանգնեցնել: Եւ եթէ հին սիստեմը օրանից յետոյ էլ չարունակուի, այն ժամանակ աւելի կ'արագանայ վերջնական կատաստրոփը, և Թիւրքիան կը վերակազմուի ոչ թէ վերելից, այլ ներ-

քերց—ժողովրդի ձեռքով։ Այդպէս է թելադրում պատմական անհրաժեշտութիւնը, այդ է ասում երկրի ներկայ ընթացքը։

Ե. ԹՌՓԶԵԱՆ

ՆՈՐ ԱՏԱՅՈՒԱԾ ԳՐՔԵՐ

1) Մ. Շովքեան, Գրախօսականք Մոսկուայի Կայսերական Հնագիտական Ընկերութեան հրատարակութեանց վրայ, Վենետիկ, 1902 թ.։

2) Հայ որբերու Բարիզի առևազումը, Լոնդոն, 1903 թ.։

3) Լէօ, Գրիգոր Արծրունի, հ. Ա., Թիֆլիս, 1903 թ., գինն է 3 հատորի 3 ր., ճանապարհածախոսվ 4 ր.։

4) Ինգլիս., Խեցիներ Ժողովող Սենեոր Գոդոլֆի պանդիլսութիւնը, Շուշի, 1903 թ., գինն է 10 կուլ.։

5) Grigor Chalathiantz. War Artasches von Armenien der Besieger des Krösus?

6) Լէօ, Թաթախման գիշերը, Թիֆլիս, 1903 թ., գինն է 5 կուլէկ։

7) Տիգրան Նաւասարդեանց, Ժողովածու հայ-ժողովրդական հէքիաթների, X-րդ գիրք, Թիֆլիս, 1903 թ., գինն է 50 կ.։

8) Տիգրան Նաւասարդեանց, Բառգիրք Արարատեան բարբառի, Թիֆլիս, 1903 թ., գինն է 50 կ.։